Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

V
Ŋ-29
507

Snegr
II 59/74
242

891.99
Դ-29

ՍԱՂՄՈՍԱԿԱՑ
ԴՊՐՈՑԻ ԵՒ ԿՈՒՍԻ
ՀՕՐ
ՍԱՆԱՏՐՈՒԿ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐԻ
ԱՐՇԱԿՈՒՆԻՈՑ
ՎԱԽՃԱՆՆ
ԿԱՄ
ՁԿՆԻ ՓՍԱՆ ԱՄԱՑ

ԳՐԵԱՑ
ԹԵՐՈՒՆԻՆ ԳԱՐԻԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ
1875
Ի Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՏՊԱԳՐԵԱԼ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԻԱ Մ. ՏՆՏԵՍԵԱՆ
Ի ՊԱՀՃԷ—ԳԱԲՈՒ ԷՍԱՏ ԷՖԷՆՏԻ ԽԱՆ. ԹԻՒ 13
1876

507-62

Le 5 Novembre de 1875. Le Censure de St. Petersbourg a ordonné d'imprimer.

371-2013

ՀԱՆԴԻՍԱԴԻՐՔ

ՍԱՆԱՏՐՈՒԿ Թագաւոր Հայոց Արշակունի՝ քեռորդի Աբգարու Թագաւորի Հայոց Միջագետաց։

ԵՐՈՒԱՆԴ Արշակունի նախարար, քաջ և հզօր, բայց դաժանատեսիլ — պոռնկորդի։

ԵՐՈՒԱԶ Եղբայր Երուանդայ՝ ընթերցասէր և գիտնական — երկորեակ։

ԱՐԳԱՄ Նահապետ Մուրացան տոհմի հայացեալ Մարաց, երկրորդ Արքայի։

ՍԼՈՒԿ Նահապետ Սկուենեաց տոհմի՝ նախարար Տուրուբերանի։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ, ՈՐՍԱՊԵՏ, ՈՐՍԱԿԻՑՔ և ՍՊԱՍԱՒՈՐՔ · և ԴԵՍՊԱՆՆ ՀՌՈՄԱՑ։

Անցք չորից ժամուց։

Այս անցք անցանեն ի Մծբին Մայրաքաղաքի Հայոց, ի 65 ամի Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

ՍԱՆԴՈՒԽՏ ԴՇԽՈՅՑԻ ԵՒ ԿՈՒՍԻ

ՀՕՐ

ՍԱՆԱՏՐՈՒԿ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐԻ

ԱՐՇԱԿՈՒՆԻՈՅ

ՎԱԽՃԱՆՆ

ՎԱՐԱԳՈՅՐ Ա·

Տեսարանն առաջի առանձ զբաղեալ է դարպասի Երուանդայ Արշակունւոյ՝ ի Մծբին · յարեւելակողմն դահլիճն ընդ որում՝ սրահաշան, ի դիզակերտն Ռոնիր, յորոյ վերայ յարատարագին երեսի լուսանցոյց յեղանահան ծիրանելոյզ · շարջանակի ընդ որմն՝ քաղաքարան։ Բազմեալ կան Երուանդ և Երուազ։

ԵՐՈՒԱՆԴ ԵՒ ԵՐՈՒԱԶ

ԵՐՈՒԱՆԴ

Անտանելի է Արքայի հեգնութիւն,
Որ կը շարժէ ամեն օր իմ բարկութիւն ·
Ի՞նչ է յանցանքս՝ որ Հայրս ո՞վ է՝ յայտնի չէ ·
Զէ՞ բաւական՝ որ Մայրս Ազատ Տանէ է։

ԵՐՈՒԱԶ

Այդ խօսքերէն՝ որ Սանատրուկ կը խօսի,
Իմ սրտի մէջ արեան աղբիւր կը հոսի ·
Միայն դու չես մեր Մօր ծընունդ, ես եւս եմ,
Ի՛նչ քեզ ասուի, ես եւս պիտի այն կիսեմ։

ԵՐՈՒԱՆԴ

Միշտ ատելի է չիլ մարդոյն՝ հայելին.
Խոհեմութիւն չէ և գովելն՝ գովելին,
Երբ գովեստքն կարէ դիպչիլ այն մարդոյն,
Որ ունի կիրք՝ հակառակ այն գովելոյն։

ԵՐՈՒԱԶ

Ո՞չ ապաքէն մենք ծանօթ ենք Աբգարին.
Կարե՞նք անունն յիշել հանդէպ Արքային.
Զի՞ ասէր թէ՝ դուք Հանգուցեալն յիշելով,
Սոսկ թերութիւնքս կը ակնարկէք կեղծելով։

ԵՐՈՒԱՆԴ (Քանդաբարելով.)

Ինձ դէմ կ՚ածէ յայտնի նկար ծընողիս,
Որ ամուսին չունելով է ծընել զիս.
Ամ՚թ նոցա՝ որք հարս անունն են խնայել,
Ո՛չ թէ հոգին, այլ միայն տեսքն են նայել։

ԵՐՈՒԱԶ (Ճնշեալ է ծնմարդուենէ.)

Ցիրաւի է՝ մեր Մայր էր յոյժ ճառագէմ.
Բայց նորա կեանք ընտանեկան չէր ընդդէմ.
Արշակունեաց ցեղէն գոլով նա սերեալ,
Արքունեաց մէջ միշտ պատուով էր մեծարեալ։

ԵՐՈՒԱՆԴ (Ոգեւորեալ.)

Եդեսիոյ Տիկին՝ Դշխոյն Հեղինէն,
Ունէր հրաման Յ.Աբգար Արքայ իւր առնէն,
Սիրով պատուով յարգել Տիկին մեր Մայրը,
Որ պատուական էր նրմա զետ իւր քոյրը։

ԵՐՈՒԱԶ

Իմ միտքս է որ երբ մենք դարպաս կ՚երթայինք,
Արքայորդւոց հետ խաղակից կ՚ընէինք.

Ցգեղ էինք, որպէս և այժմ չենք չքնաղ,
Բայց մեզ չկայր ասող ոք թէ մի՛ դայք խաղ.
Ի՞նչպէս չքեղ պատանի էր Անանէ.
Եւ տան ամօք երիցագոյն էր մեզնէ.
Մեզ զբօսակից լինելէն բնաւ չէր խոյս տար.
Անդոսնելոյ երբէք նշան չէր ցոյց տար։

ԵՐՈՒԱՆԴ (Գոչելով.)

Միթէ սա եւս քի՞չ է մեզ հետ խաղացել,
Ըմբշամարտի, գօտեմարտի մէջ մրտել.
Ի հարկէ ես նորան խայթ տալ չուզէի,
Ապա թէ ո՛չ ամեն տեղ 'տի գլորէի։
Սա իմ ուժիս յիսներորդ մասն եւս չունէր,
Ըմբշամարտից մէջ միշտ յաղթած 'տի լինէր.
Վասն որոյ երբ մեր մէջ խմբէր գօտեմարտ,
Անվերջ կ՚ընէր մեր երկուսիս մենամարտ։

ԵՐՈՒԱԶ (Հեգնաբերելով.)

Միթէ նո՞ր անցք ձեր մէջ տեղի ունեցաւ։

ԵՐՈՒԱՆԴ

Այսօր Հռոմայ Դեսպանին ճաշ տրուեցաւ,
Ես եւս կայի բաղմականի մէջ նստած.
Իսկ արքայն էր քիչ մը գինւով զուարթացած.
Ճաշն յերկարեց. Դեսպանն պատմեց հին անցքեր.
Արքայն անտի քաղեց իմ դէմ նոր վիրդեր։

ԵՐՈՒԱԶ (Դժկամակ.)

Ի՞նչ վիրդ կարէր առնուլ Արքայն այն տեղէն։

ԵՐՈՒԱՆԴ

Ակա՞նջ դիր՝ որ բանն իմանաս ի՛սկ գլխէն։
Դեսպան մեծ մեծ գովեստ տուեց Հռոմին,
Նորա առջեւ դիւղ անգամ չէ մեր Մծբին։

ԵՐՈՒԱԶ (Հասարակաբար.)

Հոկտաւիոս՝ յիսուն տարի վաղագոյն
Պարծենալով ասել էր իւր որերոյն,
Աղիւսակերտ եմ ըստացել ես Հռոմ,
Մարմարիոն, պորփիւր, կճեայ կը թողում։
Ներոն կայսրն հրձգութեամբ է այրել,
Բայց աւելի գեղեցկաղարդ նորոգել։

ԵՐՈՒԱՆԴ (Շարունակելով.)

Արքայն հարցուց. թէ Հռոմ ո՞վ է հիմնադրել.
Դեսպանն ասաց. Հովիւներն են նախ կերտել.
Իսկ Սանատրուկ այս խօսքէն շատ զարմացաւ,
Եւ Դեսպանին՝ խօսքն յերկարել նիւթ տըւաւ։

ԵՐՈՒԱԶ (Դառնացեալ.)

Մեր համազգեաց այսպէս անգէտ միշտ մընալն,
Է ակն՝ ուստի եկ Արքայի զարմանալն.
Դեռ շատ դարեր՝ կու գան կ'երթան՝ մինչ օտար,
Մեր հայրենեաց՝ զարգանալոյն թոյլ չի տար.
Կամ Ասորի, կամ Մար, Պարսիկ, կամ Հելլէն,
Լոյս գիտութեան հեռի կ'պահէ մեր երկրէն.
Այն ժամանակ՝ ո՛չ թէ միայն Սանատրուկ,
Այլ և համայն ազգ կը լինի զերթ մանուկ.
Որ այլազգի կամ հիւպատոս կամ դեսպան,
Թագաւորի հետ կը բաղմի մէկ սեղան,
Իւր պատմութեամբ կ'զարմացնէ ամենուն,
Եւ վարձ առատ կ'առնու ոսկին չողչողուն։
Դեռ լաւ նշան է՝ որ Սանատրուկ զարմացաւ.
Այլոց վերայ՝ ազդեցութիւն՝ ունեցաւ։

ԵՐՈՒԱՆԴ

Զէ՛։ Մինչ դեսպան՝ կը պատմէր այն հին անցքերն,
Արդէն բաղմաց՝ քուն ծանրացրել էր աչքերն.

Ականջ կը դնէր միայն զգաստն Դերենիկ,
Եւ Բիւրատայ Բագրատունեաց անդրանիկ։

ԵՐՈՒԱԶ

Պատմէ՛՝ լսեմ, Դեսպան ի՞նչ հին անցք պատմեց,
Որ Սանատրուկ՝ քո դէմ վերդ կամ նետ կազմեց։

ԵՐՈՒԱՆԴ (Շարունակելով.)

Իտալիոյ մէկ գաւառի թագաւոր
Որոյ անուն՝ կարծեմ ասաց Նումիտոր,
Գոլով զառամ՝ յանձնել է իւր եղբօրն՝
Իւր դստեր հետ՝ արքայական աթոռն։
Հոգաբարձն այս՝ երեւել է բռնաւոր,
Անգթութեամբ դաւ է դրել իւր եղբօր.
Որբուկ դուստրն այնպէս տեղ է պահպանել,
Ուր նա երբէք չէ կարող մարդ տեսանել.
Բայց օրիորդն՝ փեսայ դրտել է գաղտնի,
Երկու արու զաւակ ծընել է յայտնի.
Զար բռնակալն՝ այս նորածին զաւակաց
Տապան մարմնոց է արել գետն սրընթաց.
Ալիք՝ տղայքն դէպ ի գետափն են հանել.
Անմեղ որբուկքն՝ մէկ հովիւ է պահպանել։

ԵՐՈՒԱԶ (Ընդհատելով խօսքն.)

Գիտեմ՝ Ե՛րուանդ, որ հովուաց մէջ միասին,
Զարգացել են անտէր որբուկքն երկոքին.
Մէկի անունն Հռոմուլոս են կոչել,
Իսկ միւսինն՝ Հռեմոս են յորջորջել։

ԵՐՈՒԱՆԴ (Շարունակելով.)

Սոքա բարուք կայտառ և սեգ լինելով,
Զբօսակիցքն կ'ծեծեն եղել՝ կռուելով.

Հասակակիցք հընարներ են գոյացրել,
Այս պատուհաս իւրեանց գլխէն հեռացնել.
Ասել են՝ նա միայն մտնի մեր խաղրն,
Ո՛վ որ կարէ անուանել իւր ծընողրն։
Հրեռմուլոս և Հրեռեմոս գլխակոր,
Սկսել են խնդիր առնել հօր և մօր։

ԵՐՈՒԱԶ (Անհամբեր.)

Լա՛ւ։ Պարելով՝ հասել են ծեր արքային,
Հովուաց նպաստ տալով դրել՝ յիւր գահին.
Ապա գտել են և իւրեանց կորած մայր,
Որոյ համար՝ ծեր արքայ պապ՝ կը սրդայր։

ԵՐՈՒԱՆԴ (Շարունակելով.)

Զառամեալ ծերն փոխարէն այս երախտեաց,
Իւր թոռներուն տուել է տեղ ի շինուած,
Եւ նոքա անդ հովուաց ձեռամբ են հիմնել,
Հռոմ քաղաքն՝ որ աշխարհ է կուլ տուել։

ԵՐՈՒԱԶ

Ասա՛ ինչ նեռ կարաց քաղել Սանատրուկ,
Որով հոգւոյդ ցաւ առթեց պարզ կամ գաղտուկ։

ԵՐՈՒԱՆԴ (Շարունակելով.)

Մինչ Սանատրուկ ծիծաղելով ինձ նայեց,
Ձեռին բռնած ոսկի բաժակն բարձրացրեց.
Ասաց՝ նա թող միայն ըմպէ բաժակէս,
Ո՛վ իւր ծնողաց անունն կ՚ասէ յայտնապէս.
Այս որ ասաց՝ տուեց բաժակն՝ Արդամին.
Արդամ իւր հօր անուամբ խըմեց այն գինին.
Յետոյ կարգաւ խըմեցին և միւս իշխանք,
Որք միանգամ յիշեցին անդ այն անուանք.

Ամենեքեան գիտէին որ այս ամէն,
Արքայն հնարեց, որ իշխանք մեզ ծաղր անէն։

ԵՐՈՒԱԶ (Ուժերն վառած.)

Դու այս կատակ՝ արդեօք ի՞նչպէս մերժեցիր,
Եւ հացակից քո ոսոխաց յաղթեցիր։

ԵՐՈՒԱՆԴ

Ես լուռ և եթ կը նայէի վերջ բանին,
Արքայն լցրեց բաժակի մէջ իւր գինին,
Եւ ասաց ինձ. Ե՛րուանդ՝ ասա՛ հօրդ անուն,
Կարդ հասաւ որ դու եւս ըմպես յիմ գինւոյն։
Ես ասացի. Հօրս անունն է Սուր — Նիզակ.
Եւ ձախս խոկոյն կարկառեցի առ բաժակ.
Ոսկի բաժակն շրթանց կողմէն բուռն հարի,
Պատուանդանի կողմն էր ի ձեռն Արքայի.
Երբ քարշեցի՝ ըմբռնեաղն կոտրեցաւ,
Գինին՝ որ մի կաթիլ ի վայր չկաթեցաւ,
Ես խմեցի. բաժակն մատամբքս ճմլեցի,
Գնտակի պէս հանդէպ նորա գլորեցի.
Արքայն տեսաւ ձեռին կոտրած այն բաժակ,
Եւ ալն տարաւ՝ դէպ առ գօտւոյն իւր դաշնակ։
Ծուռ նայելով վերէն՝ թողի արքունքքն,
Իմ յետեւէն ելան և այլ իշխանքքն։

ԵՐՈՒԱԶ (Վհատեալ.)

Այս հեգնութեանց ա՞յլ եւս պիտի համբերենք.
Իշխանաց մէջ ի՞նչ երեսով տեղ խնդրենք.
Ըստ իմ կարծեաց՝ մեզ լաւ է որ դաղթական
Երթանք օտար երկիր անյայտ հեռաստան։

ՎԱՐԱԳՈՅՐ Բ·

Պոլսոյ էջահլէճ Աբգար Նահապետ Մուրացան·

ԵՐՈՒԱՆԴ, ԵՐՈՒԱԶ ԵՒ ԱՐԳԱՄ

ԵՐՈՒԱՆԴ

Բարեաւ եկիր՝ իմ յարգելի քաջ Արգամ,
Վիշապազանց փթթեալ ծաղիկ անթառամ·
Ընդէ՞ր այդքան վաղ ձրգեցիր գիներբուք,
Զբ կեցար մինչ Արքայն կոչէր պարերգուք։

ԱՐԳԱՄ (Վշտոյժեալ·)

Ես չունէի այսօր ախորժք պարերգուաց,
Ինչպէս որ դու չկեցար ցվերջ գիներբուաց·
Կը զզուիմ՝ երբ ուրախութեան խրախճան,
Ստէպ կուտայ շարժառիթներ գժտութեան։

ԵՐՈՒԱՆԴ (Ցոփոյ հանելով·)

Դժկամակ ինչ՝ նա միայն իմ դէմ կ'անէ,
Իսկ քեզ՝ կամ միւս նախարարաց կը խնայէ·
Ո՞ւմ չէ յայտնի՝ թէ տիկին մայրս՝ այր չունէր,
Է՞ր պիտի այդ՝ ընդդէմ հոգւոյս զէնք չինէր։

ԵՐՈՒԱԶ (Թախծաբէն·)

Ես դարձեալ իմ ասածս պիտի երկրորդեմ·
Երթալ պէտք է հեռի աշխարհ տարադէմ·
Թող վայելէ՛ արիւնաղանգ այս աթոռ,
Եւ դիւցական պատիւ ձօնէ իւրեան հօր։

ԱՐԳԱՄ (Մէծալեալով·)

Ո՞վ է տեսել երես նորա հօր կամ մօր·
Որոյ կին էր քոյրն Աբգարու միամօր·

Աւանդութիւնք բազմադիմի կը յածեն,
Այլ՝ ո՛ւր դառնաս՝ դորա ծընողք յայտնի չեն։
Արշակունեաց սովորական ծէսերով՝
Արքայազունք պիտի ապրին հասերով·
Ինչ որ արքայն նոցա կուտայ ի կալուած,
Հաշտենից կողմ, Աղիովտի կամ Ծոփաց։
Աբգար նոյնպէս՝ երբ հօր աթոռն է դրաւել,
Իւր այն մէկ քոյր՝ իւր վիճակն է ուղարկել·
Դշխոյն և իւր ըստնդիաց զաւակքն,
Մնայել են փոթորկածին ձեան տակքն·
Որսորդ շունն գտել է այն որբուկին,
Պատսպարեալ ի ծոց Սանոտ դայեկին·
Այն պատճառաւ Սանատրուկ են անուանել,
Սանոտոյ տուրք կամենալով գոլն յայտնել·
Իսկ այլք կ'ասեն թէ Շանատրուկ է ասուած,
Շան օգնութեամբ գոլով մահէն ազատուած։
Եւ Աբգարն է նորա անուն փոխարկել,
Եւ դայեկի Սանոտ անունն հռչակել·
Թէ այս, թէ այն· բայց ծընողքն չեն յիշուած,
Սա Աբգարու քեռորդի է յորջորջուած·
Այլ թէ այն քոյր՝ ո՞ր իշխանին էր զուգեալ,
Ոչ ոք գիտէ, ուրեք, երբէք չէ յիշեալ։

ԵՐՈՒԱԶ

Աբգարու իսկ անունն Աբգար կոչել են,
Ասորւոց ծուռ կորճալեզու խօսելէն·
Նորա անուն առաջ Մանով է եղել·
Միայն Աւագ այր մականունն են պահել։

ԵՐՈՒԱՆԴ

Ա՛րգամ՝ մի՞տքդ է սորա աթոռ բազմելն,
Եդեսիա կամ Միջագետք մտնելն։

ԱՐԳԱՄ

Դեռ եւս էի ես տառնամեայ պատանի։

ԵՐՈՒԱՆԴ

Հասակակից ենք մեք ուրեմն համատի։
Բայց այսօրուան պէս պահած եմ ի մըտի։

ԱՐԳԱՄ

Դու՛ք՝ յարքունիս, ես՝ հանապազ ի դաշտի։

ԵՐՈՒԱԶ

Երանի թէ ի դաշտ լինէր մեր վիճակ։

ԵՐՈՒԱՆԴ (ԱՀԵՂ ԺՊԷՌՈՎ։)

Արքայի հետ ո՞վ կը կոտրէր այն բաժակ։

ԱՐԳԱՄ (ՀԵՌԱԳՐԷԷՐ։)

Ե՛րուանդ՝ այն ի՞նչ էր որ ճաշին արարեր։
Գիտե՞ս՝ Արքայն իւր աչ տարաւ առ սուսեր։

ԵՐՈՒԱՆԴ

Տեսա՞ր և դու՝ իմ ծուռ նայելս Արքային։
Այն իւր սուսեր կը ջախջախուէր իւր գլխին։

ԱՐԳԱՄ

Կարծիք կ՚անեմ՝ որ թէ կրկնէ խբրախճան,
Կը գումարէ բազում սրիկայք դաւաճան,
Որ սեղանոյ վերայ քո անձն խողխողեն,
Եւ բաժակի նախատինքն այն վրիժակեն։

ԵՐՈՒԱԶ (Վհատեալ։)

Լաւ է նորա կոչունք այլ եւս չերթալը։

ԵՐՈՒԱՆԴ

Այդ ցոյց կու տայ՝ իմ նորանէ խելթալը։

ԱՐԳԱՄ

Եթէ երթաս՝ մահ քեզ անշուշտ կայ պատրաստ։

ԵՐՈՒԱՆԴ

Եթէ չերթամ՝ պիտի կոչէ զիս անսաստ։

ԵՐՈՒԱԶ

Լաւ չէ՞ արդեօք՝ այս կողմերէն դաղթելը։

ԵՐՈՒԱՆԴ

Եւս առաւել լաւ է չարին յաղթելը։

ԱՐԳԱՄ

Ինչո՞վ պիտի՝ այս չարերուն դու յաղթես։

ԵՐՈՒԱՆԴ

Թէ իմ խորհուրդ քեզ բացատրեմ՝ կը լսե՞ս։

ԱՐԳԱՄ

Ես պատրաստ եմ ամեն խորհուրդ լսելոյ։

ԵՐՈՒԱԶ

Եւ խորհրդեան դէմ պատասխան ասելոյ։

ԵՐՈՒԱՆԴ

Ա՛րդամ՝ ունիմ վրկայք Աղգիս ծերերէն,
Որ ես հեռի չեմ Պարթեւաց աթոռէն։
Սա՝ քեռորդի չէ՞ր Աբգարու Արքայի,
Որ թագ դրրեց ի Շաւարշան քաղաքի։
Մինչ Աբգարու օրինաւոր ժառանգը՝
Պայազատեց Եդեսիոյ գահոյքը։

ԱՐԳԱՄ

Աբգար ժառանգ էր Արշամայ աթոռոյն։

ԵՐՈՒԱՆԴ

Արշամ ո՞վ էր՝ յայտնի չէր մեր ծերերոյն։

ԵՐՈՒԱԶ

Ոմանք կ'ասեն՝ էր խորթ եղբայր Տիգրանայ,
Եւ բազումք եւս՝ թէ հարճորդի էր նորայ։

ԵՐՈՒԱՆԴ

Բայց Արտաւազդ չէր անզաւակ անորդի։
Նա եւս ունէր պարթեւածին Հարճորդի։
Նորա թոռն էր իմ վատաբաղդ տգեղ Մայր,
Որ վասն ուժոյն իւր մընացած էր անայր։
Նորա ուժն ժառանգաբար ես ունիմ.
Դեռ չէ ելեալ ոք ախոյեան աջոյն իմ.
Թէ ծուռ նայիմ՝ կը հերձանի որձաքար,
Սանատրուկ ինձ լար ձգել չի մարթանար։

ԵՐՈՒԱԶ

Բայց մենք կարենք ընդդէմ նորա բռնանալ,
Նա այն աթոռ չէ իրաւամբք ժառանգեալ։
Ուղիղ ժառանգ Արտաւազդայ՝ Երուա՛նդ է։
Նա՝ Արշամայ աղջկորդւոյ սերունդ է։

ԱՐԳԱՄ

Ազգն՝ Արշամին՝ այն պատճառաւ գիրկ բացեց՝
Որ նա Հռոմայ լեգէոններն դուրս վանեց։
Երբ վերին Հայք օտարաց ձեռք մընացին,
Արշամ մաքրեց աղատեց Հայքն Ստորին։

ԵՐՈՒԱՆԴ

Ժամանակ չէր մանրակրկիտ քննութեան։
Ոտնակոխ էր եղել խղճուկ Հայաստան ...
Բայց Արշամի սերունդ չը մնաց թագաւոր,
Եւ Սանատրուկ նստաւ որպէս բռնաւոր։
Աբգարու Տան ծեր և մանուկ կոտորեց։
Մինչեւ բամբշի Տիկնութեանն ազահեց։

Արեամբ զանգեալ աթոռն նստաւ բռնութեամբ,
Եւ իւր ձեռքերն կը շաղախէր միշտ արեամբ։

ԵՐՈՒԱԶ

Ո՞վ միակ դուստրն իւր ձեռամբ կը խողխողէր։
Սանդուխտ Դշխոյն այս անգութ հօր զոհն չէ՞ր։

ԱՐԳԱՄ

Եդեսիա վրկա՛յ էր այս խրժդժութեանց։

ԵՐՈՒԱԶ

Եդեսացիք չէին տանող բռնութեանց։
Նա՝ այն քաղաք թողեց, չինեց այս Մծբին,
Արձան կանգնեց՝ վրէն դրոշմեց՝ «Մընաց մին»։

ԵՐՈՒԱՆԴ

Քան զայս աւել ի՞նչ գործ ունի գովելի։
Ստորուկ մի է Հռոմայ և ո՛չ աւելի։
Սորա նըման՞ էր և Աբգար թագաւոր,
Որ ամրացոյց Եդեսիայն փառաւոր։
Եթէ նըրան չը պատահէր այն ախտն,
Հայոց աղգին կը ծառայէր իւր բաղդն։

ԱՐԳԱՄ

Աբգար կամէր վրտարանջել Հռոմէն,
Եւ լեգէոնք նորին հանել իւր երկրէն։

ԵՐՈՒԱԶ

Բայց այն անբոյժ հիւանդութիւնն խափանեց,
Հայոց աղգի ազատութիւնն նահանջեց։

ԵՐՈՒԱՆԴ

Ի՞նչ էր այսօր այն հացկերոյթ Դեսպանի,
Ի՞նչ կարէ տալ յագուրդ անյագ գաղանի։

371.2013

Գրադարան

Է՞ր և Պարսիկք չը նուաճեցան Հրոմէն,
Վասն է՞ր միայն Հայք կախուեցան նորամէն.
Ա՛րգամ՝ եթէ այսպէս երթայ մեր բանն,
Ոսկի արծաթ բնաւ չեն Ծնար մեր Տանն.
Երեսուն ամ նստած անգործ սոսկ կ՚ուտէ,
Տասնապատիկ աւել Հռոմայ կ՚ուտեցնէ.
Ես մըտադիր եմ յեղադարձ առնելոյ,
Ժառանգական գահիս վերայ բազմելոյ։

ՎԱՐԱԳՈՅՐ Գ.

Մոռնէ ի գոհիցն Սլուկ Սկոռնէ.

ԵՐՈՒԱՆԴ, ԵՐՈՒԱԶ, ԱՐԳԱՄ ԵՒ ՍԼՈՒԿ

ՍԼՈՒԿ

Ողջոյն ընդ ձեզ. ես կարծեցի՝ որ Արգամ
Աստ պիտի գայր, ասի և ես անդ կ՚երթամ։

ԵՐՈՒԱՆԴ

Գալդ ի բարին՝ Սլուկ հզօր ազգապետ։

ԱՐԳԱՄ

Ի գիներբուաց յելանելս անդ ես թէպէտ
Կամեցայ քեզ նշմարք անել՝ միասին
Գալ աստ, սակայն ասի լաւ չէ երկուսին
Միանգամայն թողուլ սեղանն ելանել,
Եւ պատճառ տալ մեր մէջ դաւ ինչ տեսանել։

ՍԼՈՒԿ

Տեսանելոյ ո՛չ աչք մընաց և ո՛չ լոյս,
Երբ պարերգուք մըտան և ես տուի խոյս.

Այս չէ՛ ինչոյ արժանաւոր Պարթեւաց,
Այլ շամբշուլթիւնք Մակեդոնեանց և Ցունաց.
Անոյշ գինին ետ մոլեգնիլ Արքային,
Անհուն անչափ կալուածք ձօնեց Դեսպանին.
Այժմ ընդ երեկս կամի և յորս հեծանել,
Հրաման տուեց՝ Երուանդին եւս ազդ առնել։

ԵՐՈՒԱԶ

Միթէ Երուանդ վերակացո՞ւ է որոց,
Կամ նրմա՞ է յանձնած պահեստ էրէոց։

ՍԼՈՒԿ

Քաջի արանց խորհուրդն կարծեմ՝ թէ ա՛յլ է,
Որսըն պատրաստ դաւադրութեանց կրկէ՛ս է.
Երուանդ՝ նորա սիրան ի ճաշուն խոր խոցեց,
Ինձ թուեցաւ՝ թէ նա մտքին բան դըրեց.
Մանաւանդ մէկ հրաման տուեց զինակրին,
Նա երբ լսեց՝ խոժոռվեցան դէմք նորին.
Զեմ երկբայեր ասել թէ այն իսկ հրաման,
Վասն Երուանդայ դատակընիք էր մահուան։

ԵՐՈՒԱՆԴ

Զհասանի գործն անդ՝ որ իրերաց մենք դաւենք,
Ապա թէ ո՛չ՝ մենք եւս այնքան ապուշ չենք։

ՍԼՈՒԿ

Ցարբեցութեան թէ մէկ ագռաւ սատկեցնէ՝
Տասն և հինգ գեօղ Դեսպանին կու պարգեւէ։

ԱՐԳԱՄ

Իրաւ եթէ վաղիւ ուզէ Դեսպանքն,
Արքայն չունի հընար փոխել իւր բանքն,
Այն կալուածներն՝ ինչ որ նորան խոստացաւ,
Համարեա՛ թէ Դեսպանն արդէն ստացաւ։

ԵՐՈՒԱԶ

Սարդանապալ եթէ այսպէս չը լինէր,
Նորա գահն ո՞վ պիտի յերկիր կործանէր.
Վարբակէս Մար տեսաւ նորա գործ տըգեղ,
Հրակէզ ջնջեց հաղարամեան գահ չըքեղ։
Մեր մէջ չը կայ Ազգի պատիւ պահպանել.
Ցօժար ենք մենք թագն ի տղմի տեսանել։
Ղուկուղէսին տուինք մեր ոսկի և արծաթ,
Որ մեր ձեռաց ի Հռոմ կըռնէն կապ երկաթ.
Թէ Կրասոսի դանձերն առել էր Տիգրան,
Այն տոկոսեօք կը դարձնէ արդ Հայաստան.
Սանդուխտ դշխոյն կ՚ասէր վասն այս արծուեաց,
Եւ այս հոգովք շուրջ պատեալ էլ ի կենաց։

ԵՐՈՒԱՆԴ (Թախծաբէն.)

Ո՞ աստուածք մեծք, վասն է՞ր այս մեր յիմարին,
Առ ի լկել մատնեցիք Հայքն Ստորին.
Եւ մենք դեռ եւս չունինք փափագ աղատել,
Որպէս թէ մեծ գործ է խորհուրդ ինչ հաստել։

ՍԼՈՒԿ

Հաստատեցէք՝ ինչ խորհուրդ որ կամենայք,
Ես ձեզ հետ եմ՝ թէ կ՚ուզէք որ իմանայք։
Այսօրվան ճաշ համբերութիւնս սպառեց,
Ամեն աղգաց մէջ վատ համբաւ մեզ սփռեց.
Ո՞վ է տեսել մերկ օրիորդք ի կաքաւ,
Կայթել, պարել, ցուցք յօրինել՝ նըւագաւ։

ԱՐԳԱՄ

Արքայն ինքնին իւր բաժակէն տայ գինին,
Որ աւելի լկտիանան, մոլեգնին։

ԵՐՈՒԱԶ

Երբ Սանատրուկ անակնկալ իւր դստեր
Անձին ընդդէմ վեր բարձրացոյց իւր սուսեր,
Երբ և դահիճ հնազանդելով հրամանին
Կտրեց կենաց միջահատ թել Դշխոյին.
Ո՞վ կը կարծէր թէ այն անգիւտ գոհարքն,
Որ դրաւել էր ծնողի հոգին և սէրքն,
Պիտի այսքան կանուխ մատնի մոռացման,
Եւ Սանդխտոյ մարմին փտի Շաւարշան։
Միակ դստեր կսկիծ մերժէ ի սրտէ,
Եւ սիրտ ազգի խսպառ իւրմէն ցրտացնէ։
Աթոռանիստն ընդ քարշ բերէ դէպ Մծբին,
Սկիզբն առնէ խունկեր բուրել Հրոմին։
Դստեր սուգ կոծ ողբաց միայն Նոնոփար.
Ոչ թագ, ոչ փառք նորան տբւին մխիթար.
Ծիրանեաց տակ ցարդ եւս ունի քուրձերքն.
Նորա հոգին՝ միշտ պիտի կրէ թուխերքն։

ՍԼՈՒԿ

Սանատրուկէն աւել սրդաց Վարդուհի,
Որ հարս կոչուեց Բագրատունեաց Թագադրի.
Մի օր առաջ քան Սանդխտոյ կատարած,
Մինչդեռ Դշխոյ չէր քուրմերէն բանտ դրրած։

ԵՐՈՒԱՆԴ

Այն օր էր որ Քարձամ Ազգի Քրմապետ,
Քրմաց դասուն յանդգնութեան տեղի ետ,
Որ Դշխոյին իւր առանձին սենեկէն,
Շղթայակապ յատեան ռամկին հանել են։

ԵՐՈՒԱԶ

Եւ Վարդանոյշ՝ որ հարսնացաւ Դերենկին,
Արտօսր բազում ցօղեց ի սէր Դշխոյին.

ԵՐՈՒԱՆԴ

Այլ թագուհին՝ երբ ծնաւ ուստրն Արտաշէս՝
Եւ Վարդուհուոյն՝ որ խնամարկէ մայրապէս։

ՍԼՈՒԿ

Բագրատունիք և Արծրունիք երկոքին,
Են հաստարանք Սանատրուկ դահակին։

ԱՐԳԱՄ

Նոքա էին և առաջին օգնական,
Մինչ Սանատրուկ կայր տակաւին Շաւարշան։

ԵՐՈՒԱԶ

Խնամացել են այս երկու տունք վերստին,
Սմբատայ դուստր՝ հարսն է որդւոյ Դերենկին.
Եւ Վարդանոյշ և Վարդուհի են տիկնայք.
Սոսկ Սանդուխտին դաւեցին իւր ապագայք։

ՍԼՈՒԿ

Վարդանոյշ չէ՞ր այն օրիորդ դեղեցիկ,
Որում յանկարծ փեսայացաւ Դերենիկ.
Դերենկայ վրայ աչք ունեցել է Քարձամ.
Այլ Սանդուխտ տուել՝ հարսնութեան իւր բարեկամ։

ԱՐԳԱՄ

Այո՛՝ այն է։ Արդ է Տիկին Արծրունեաց.
Նա Քարձամի ճանկէն փեսայն իւր կորզեաց։

ԵՐՈՒԱԶ

Այլ Քարձամի բարկութեան զոհ տարտարտ
Եղեւ Սանդուխտ՝ որ ճաշակեաց մահ անպարտ։

ԵՐՈՒԱՆԴ

Լսել եմ որ նոյն օր ինքին առանի,
Ուր խառնած կայր ամբոխ անթիւ խուժանի,

Մինչ Քրմապետ Քարձամ հանդէպ Անահտայ,
Ծունր է դրել՝ որ Դիցամօրն նոր փառք տայ,
Սանդուխտ Դշխոյն, որոյ մարմին կայր անդէն՝
Դահճի սակրով գլուխն հեռացրած դիակէն,
Օդի մէջ իւր զգեստներով զարդարուած,
Եւ ոսկեհուռ բազմարանի մէջ նստած,
Վերէն ի վայր է եկել զերթ կառքերով,
Եւ Անահտայ գլուխըն կոխել ոտքերով.
Մէկ հարուածով անդրիք յերկիր են գլորվել,
Եւ Քարձայ գլուխըն ջարդել ջախջախել։
Լսել եմ որ Քարձամ ցարդ կայ կենդանի,
Նեխեալ են վերք, որդունք բունեալ ի մարմնի.
Կոյր է և խուլ, միայն լեզուն ի բերան,
Որ միշտ գոչէ «Ա՛յս վրէժ կուսի է արեան»։

ԵՐՈՒԱԶ

Դշխոյի դին՝ ես ինքն տեսայ յատենի,
Որ անգլուխ անկեալ կայր անդ ի գետնի.
Գլուխն հեռի կայր ի մարմնէն առանձին.
Աչքն էր փակեալ. ժպիտ՝ շրթանց ի լարին։
Քարձամ ուրախ եկաւ երեք ծունր կրկնեց,
Ասաց. փառք քո ի Հայաստան հաստատուեց.
Այս միջոցն էր՝ որ Սանդուխտ յօդս երեւցաւ,
Եւ ոսկեղէն կառօք յանդրիս մերձեցաւ.
Ոտք նորա կայր հաստատ ի գլուխ Անահտին,
Երբ հարուածեց՝ արձանն անկաւ ի գետին.
Քարձամ իւր գլուխ դրել էր մերձ առ պատուանդան.
Ջախջախուելով շաղախեցաւ իւր արեան.
Այնուհետեւ ո՛չ տեսել եմ, ոչ լսել,
Արքայն հրաման հանեց այդ բան չը խօսել։

ՍԼՈՒԿ

Այսպիսի դուստր անզուգական կորցընող,
Զիա՞րդ կ'ասուի՝ թէ բարեգութ է ծընող.
Որ ժամանեալ վաթսունամեայ հասակի,
Բաղդ կ'որոնէ ի մէջ գինւոյ բաժակի։

ԱՐԳԱՄ

Ի՞նչ բաղդ է որ նա գինւոյ մէջ կ'որոնէ,
Գինւոյ պարգեւ արդեօք կենաց ո՞ր բաղդն է.
Հարբիլ, քնիլ, թաղ և հեծան մոռանալ,
Ի սէր Հռոմայ ազգ և երկիր ուրանալ։

ԵՐՈՒԱԶ

Դու դեռ այս նոր կը տեսանես քո աչօք,
Որ աւագաց մի ես բարձիւ և փառօք.
Բայց Հրէայ ոմն շատ գեղեցիկ է գրել,
Թէ արքունեաց գործ յո՞ր ոճիր է հասել.
Հրէից կրօն՝ մեր կրօնին ո՛չ է նման.
Նոքա ունին անթիւ աւանդք հնութեան.
Մենք կը պաշտենք աստղեր, կրակ, արեգակ,
Նոքա կ'ասեն՝ Մի է Աստուած անքանակ,
Որ ըստեղծել է արեգակ և լուսին,
Եւ կը խնամէ՝ թէ՛ այս երկիր, թէ երկին.
Այս Ստեղծողն է Առաքող Յիսուսին՝
Որ է Նորա Բան, և Որդի Միածին։
Արդ այն Հրէայն դանկատ կ'անէ այն մասին,
Որ Սանատրուկ ուրացել է Յիսուսին։
Յիսուս նա է՝ որ առ Աբգար ղրկել էր
Դաստառակաւ անձեռագործ իւր պատկեր.
Յետոյ եկաւ Թադէ Նորա աղդական,
Որով տաճարք մեր աստուածոց փակուեցան.

Այս Թադէի ականատես դալստեան,
Կայր Եդեսի՞ա մի Ասորի Պատմաբան։

ՍԼՈՒԿ

Լերուբնայի աղագաւ են քո խօսքերն։

ԵՐՈՒԱԶ

Այո՛. իմ մօտ կան Նորա գրած քարտէզներն։

ԵՐՈՒԱՆԴ

Լերուբնային ես եւս էի հանդիպել,
Մինչ Սանատրուկ Եդեսի՞ա ինձ էր յանձնել.
Նա կը պատմէր Աբգարու հին անցքերըն,
Նոր կըրօնի հետեւողաց գործքերըն.
Թէ Հրէայ Թադէ ի՞նչպէս է եկել,
Եւ Աբգարու ախտն աղօթքով բժշկել։

ԵՐՈՒԱԶ

Այս Թադէի աշակերտ էր և Սանդուխտ,
Որ մինչ ի մահ անխախտ պահեց իւր սուրբ ուխտ։

ՍԼՈՒԿ

Այն Յիսուսն պիտի լինէր այն փեսայն,
Որ կը յիշէր մինչ ի վախճան Դշխոյն այն.
Մեծ ամօթ է Սանատրուկին՝ որ Հրէայ
Նորա անուամբ արատ դնէ մեր վերայ։

ԵՐՈՒԱԶ

Այն մատեանն պիտի պահէ յաւիտեան
Սանատրուկի ցանկ դառնութեանց յոգնաղան.
Սարդանապալ այսքան չարիք գործած չէր.
Վարբակ այսքան խենթշուքիւն տեսած չէր։

ԱՐԳԱՄ (Զարմացմամբ.)

Միթէ՞, Երուաղ, դու հրէարէն գի՞ր գիտես։

ԵՐՈՒԱՆԴ

Նա Հերէից և Ասորեաց քրմաց պէս,
Ո՛չ թէ միայն կը փնթփընթայ քնթի տակ,
Այլ և շատ հին անցից ունի յիշատակ։

ԵՐՈՒԱԶ

Ես քաջ գիտեմ Հռոմէական դպրութիւն,
Ցունաց մատեանք քաղել, առնել պատմութիւն։

ԱՐԳԱՄ (Ա՜ Սը՜կ։)

Երանի՛ թէ դա լինէր մեր Քրմապետ։

ՍԼՈՒԿ

Առաջ Երուանդ պիտի բաղմի Նահապետ։

ԱՐԳԱՄ (Ո՜նը ա՜նելով։)

Նահապետ մեր՝ է մեր արդի թագաւոր։

ՍԼՈՒԿ (Շ՜ա՜փնելով։)

Երուանդ կարէ յայտնիլ արքայ փառաւոր։

ԱՐԳԱՄ

Ես յօժար եմ՝ որ Երուանդ մեր գահ բաղմի։

ԵՐՈՒԱՆԴ

Ցայնժամ Արգամ կ՚ըլնի Երկրորդ Արքայի։

ԱՐԳԱՄ

Սլուկ կ՚ըլնի Սպարապետ Զօրութեան։

ՍԼՈՒԿ

Երուազ կ՚ըլնի մեր Քրմապետ պատուական։

ԱՐԳԱՄ

Ես որսոյ տեղն կարեմ շատ մարդ գումարել։

ԵՐՈՒԱՆԴ

Եւ ես կարեմ համախոհից աղդ առնել։

ՍԼՈՒԿ

Դիպաղեղանց մէջէն ո՞վ կայ շահատակ։

ԵՐՈՒԱԶ

Քան զիս յաջող չէս գտանէր լուսնի տակ։

ԱՐԳԱՄ

Թէ այդպէս է՝ ահա՛ երդնում ի մեր Քաջս՝
Որ Երուանդայ գահ կաղդուրէ այս իմ աջս։
Տիգաւորօք կը պաշարեմ անտառն,
Ամենայն ինչ կը պարտակէ մացառն։

ՍԼՈՒԿ

Թող քաջ Երուանդ միշտ Արքայի մօտ կենայ,
Որ նորանէ կասկածանք ոք չունենայ։
Երբ հասանէ յԱրքայն գաղտնի հարուածն,
Նա թող քարշէ նետն, խընու այն խոցն։
Մենք աղաղակ կը ամբառնանք աղմկեալ,
Եւ նոյնժամայն կեցցէ՛ն կ՚առնու մեր ընտրեալ։
Թէ որսակից իշխաններէն մի քանին
Մեզ հակառակ ձայն արձակեն յանտառին,
Տիգաւոր զօրք յառաջ կու գան արշաւմամբ,
Այն քանիս իձայն կը լռեցնեն չար մահուամբ։
(Սուրհանդակ մի ներս մտաւ։)

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Հրաման է ի վեհափառ Արքայէ,
Որ գայ Երուանդ, որսակցութեամբ ընկերէ։

ԵՐՈՒԱՆԴ (Տ՚ Սուրհանդակին ոսկի դահեկան։)

Ինձ պաշտելի է վեհ հրաման Արքայի։
Ես կը հասնիմ նրմա ի մուտս անտառի։

ԱՐԳԱՄ (Ա՜ Սուրհանդակ.)

Միայն հրաւէր Երուանդայ է, մեզ չը կայ։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ա՛յլ սուրհանդակ ձեզ առաքեց մեծ Արքայ։
(Սուրհանդակ գնաց։)

ՍԼՈՒԿ

Ուրեմն և ինձ գնացած կ՚ըլնի սուրհանդակ։

ԱՐԳԱՄ

Մեզ չէ պիտոյ այժմ առանձին հրաւիրակ։

ԵՐՈՒԱԶ

Ես ձեր հետ գա՞մ, թէ մընամեմ առանձին
Եւ ինձ յարմար տեղ գըտանեմ յանտառին։

ԵՐՈՒԱՆԴ

Ուստի՞ գիտենք՝ թէ անտառի ո՞ր կողմերն,
Պիտի խմբին այս յեղակարծ որսերն։

ԱՐԳԱՄ

Լաւ է երթալ մեզ չորեցունցս միասին.
Մեր հաւաքվիլն դէտք գիտեն արդ գլխովին։

ՍԼՈՒԿ

Արդեօք լաւ չէ՞ր՝ նետերն դեղել թիւներով։

ԵՐՈՒԱԶ

Իմ նետք, փքինք՝ միշտ մխած են դեղերով։

ԵՐՈՒԱՆԴ

Բանըն ա՛յն է՝ որ նետ նորան խոց դընէ.
Այն ես գիտեմ ի՞նչպէս քարշելն ի մարմնէ.
Թէ մընացած լինի կենաց կէս բաժին,
Ես կը ճմլեմ այն կէսն ի մէջ իմ գրկին.

Թէ նետ նորան այժ չունենայ ղըրաւել,
Բաղուկներս կան նորա տեղն գըրաւել։

ՍԼՈՒԿ

Ահա այս է մեր Արքայի չափ խելքին,
Որ քեզ խոցեց, և որս կ՚երթայ միասին.
Զի՛ ասեր թէ որսորդաց նետ շատ անդամ,
Մահ կը բերէ անակնկալ, տարաժամ։

ԵՐՈՒԱԶ

Հին առած է մեր Ազգի մէջ տարածուած,
Թէ երբ այծու լինի մահու օր հասած,
Կը քըսքըսվի հովուի ձեռքի հաստ ցպոյն,
Որ կայծակի պէս կ՚իջանէ իւր գլխոյն.
Եւ Սանատրուկ՝ Երուանդի սիրտ խոցելով,
Իւր հիմք խախտեց անկեան վէմերն քանցելով.
Այժմ եւս կ՚ուզէ նոր դաւանօք գործն ուղղել.
Լա՛՝ թէ չընկնի այն գուբ որ ինքն է պեղել։

ՎԱՐԱԳՈՅՐ Դ·

Տեսաքանն ցուցանէ անդուա, և է նոքին՝ Աբէայն է շարժուն քահանայապետ դեսպանէ. անդ են Աստուածն և Դեսպանն Հրոմայ է զբօսանս։ Ա. Աբէայէ կան Աբէամ, Երուանդ, Սըսկ, Բիւրատ Բաքրատունք, Դեբենիկ Աբծրունք՝ որոյ ծերունւոյն Սենեքերիմայ, Աշոտ՝ որոյ Բիւրատայ, Զքնուկերն Վահան՝ որոյ Ընյակայ Ամատունեաց, Ուրպէտն Աբուսէս՝ որ Մեհրդատայ ցեղն էր, Կապարճակերն Խորէն՝ որ Խոսրովանեաց տոհմն էր, Աբծուեկերն Սանասար՝ որ Դեբենիկայ երկրորդն էր, և մեզ նորա հետ կը շրջեր· Բազեկոն Մանասէհր Բզնունեաց Նահապետ, և այլ զրանորեաք և մանկլաւիկք։ Երուազ կայ է հետասատանք զարանեալ, և կ՚ապասք՝ որ լսելի լինին հնչեանք փողոց։ Ուրեկ շուտ և բարակ և արծուք և բազէք կան է յետս որսակից եղեանաց։ Է՛ ընդ երեկ· օրն հանդարտ· և խոսատանայ գիշեր լեալոսին։

ԱՐՔԱՅ

Պիտի պատմեմ ձեզ մէկ տեսիլ հրաշալի։
Ճաշին անոյշ գինին առատ ծրծեցի·
Երբ քունս եկաւ՝ մրտայ սենեակ, պառկեցայ,
Բայց զարհուրած՝ ի ննջմանէս զարթեցայ։
Երազիս մէջ Դուստրս հանդէպս երեւցաւ,
Իւր քաղցր լեզուաւ բարձրաբարբառ խօսեցաւ·
Ասաց՝ Հայրիկ, քեզ մեծ վըտանգ կը հասնի,
Քըսանամեայ տարագրութեամբ մեր տոհմի։
Աչքերս բացի, իմացայ որ երազ էր,
Միւս անգամ քուն աչքերուս տիրել էր·
Դարձեալ ստուեր իմ սիրական Սանդուխտին,
Ինձ երկրորդեց երազիս բանն առաջին·
Եւ աւելցուց· Հայրիկ՝ ինձ մահ նիւթեցիր,
Բայց ես բընաւ չեմ մոռանար Ազգ, Երկիր։

Ահասարսուռ կրկին անգամ զարթեցայ·
Բայց ուժգնութեամբ խմած գինւոյս քընեցայ·
Երրորդ անգամ Դշխոյս լուսով զարդարած,
Գլխոյն պըսակ յընտիր ծաղկանց բոլորուած։

ՍԼՈՒԿ

Այդպէս իսկ է և այն վայրկեան երեւել,
Երբ քարձամայ գըլուխն անդրեաւն է ջաղխել·

ԵՐՈՒԱՆԴ

Երազ ցընորք են խաբեբայ և պատիր,
Ինչ որ տեսնենք՝ այն երբէք չի՛ պատահիր·
Մինչդեռ Դեսպան կայ ի զբօսանս հեռագոյն,
Ականջ դընենք քաջի արանց երազոյն։

ԱՐՔԱՅ (Շարունակելով·)

Հագին՝ կարմիր, վրէն ծածկոյթ ծիրանի,
Մատանց վերայ ականակուռ մատանի·
Ոսկի մանեակ գոհար ակամբք փողփողեալ,
Վերա վերա շարիւք պարանոցէն վայր կախեալ։
Իմ յանդիման կացեալ լալով խօսեցաւ·
Նորա ասածն հոգւոյս վերայ կնքեցաւ·
Հայրիկ՝ ասաց, դու իմ արիւն թափեցիր,
Բայց այն արիւն կուլ չը տըւեց մեր երկիր·
Անպարտ արեանս բողոք հասաւ մինչ երկինք,
Թագէի հետ մենք Հայաստան մընացինք։

ԱՐԳԱՄ

Մինչեւ այսօր ես չը գիտեմ թէ ո՞ւր է
Թաղուած անմեղ Սանդուխտ Դշխոյն, կամ Թագէ·
Գիտեմ որ մահ նոցա եղեւ Շաւարշան,
Այլ ինձ չէ՛ յայտ թէ մարմինք ո՞ւր թաղուեցան·

ԱՐՔԱՅ (Շարունակ.)

Թագէ՝ փեսիս՝ էր մերձաւոր ազգական,
Նա, և եղբայր իւր եղբայր Տեառն կոչեալ կան։

ՍԼՈՒԿ (Ցանկ. Երուանդայ.)

Սա այն Հրէայն է որ երուազ կը պատմէր,
Որ արքունեաց բան իւր լեզուաւ դրոշմել էր։

ՍԱՆԱՏՐՈՒԿ (Շարունակելով.)

Դատրիկս ասաց. Այն արիւնք կան քո գլխին.
Քո թագ պիտի շուտ գըլորվի ի գետին։
Ինչպէս դատերդ չը կամեցար խընայել,
Զը կարացիր և Հայրենեացդ խընամել.
Մի՞թէ՝ թէ ի՞նչ ասացի քեզ յատենին,
Մինչ կ՚մղէիր զիս առ պաշտօն Անահտին.
Հիւանդ Աբգար իւր ազգ կամէր ազատել,
Առողջ և ժիր՝ դու յօժար ես ծառայել։
Երեսուն ամ ծանրանալով աշխարհիդ,
Վատ յարացոյց տուիր յետնոցդ և տոհմիդ.
Անպատսպար մնս և ոսկերք համազգեաց,
Կրծել տուիր Հռոմէական արծըւեաց։

ԵՐՈՒԱՆԴ

Ա՛ռքայ՝ արիւնդ է այդ ամեն նըկարել.
Դու Հայրենիքդ՝ երբէք նուազ չես սիրել։

ԱՐՔԱՅ (Շարունակելով.)

Ասաց. Հա՛յրիկ՝ եղբօրս պիտի պաշտպանեմ,
Որ մեր տոհմի մէջ ապարոյդ պահպանեմ.
Մեծ վտանգաց մերձ է արդէն քո կեանքըն,
Զե՛ս ձեռնհաս մերժել քեզնէ փորձանքըն.

Այնքան խոր ես մրտել անձամբ ծով արեան,
Որ այլ ելս չունիս հնար ինչ փրկութեան.
Դաւաճանիցդ բորբոքել ես բարկութիւն,
Հարկադրել ես որ քեզ նիւթեն նենգութիւն.
Զը հրաւիրե՞ց կատակ և՛ մահ իմ անձին,
Նոյն ծաղր է արդ խարդաւանող քո թագին։
Ափսո՛ս՝ Հա՛յրիկ, որ չեմ կարող քեզ օգնել,
Քեզնէ հարուած դաւաճանի հեռացնել.
Բայց չեմ թողնուր՝ որ մեր ճոխ Տուն չը քանայ,
Միւս անգամ պիտի մեր Տուն թագ դառնայ։
Այս որ ասաց՝ դադարեց այն ձայն քաղցրիկ,
Աչքերս բացի, այլ ելս չը կայր իմ Դատրիկ։
Ինձ ասացին՝ թէ պատրաստ են հանդերձանք.
Հեծայ նըժոյգս, ահա՛ ողջամբ աստ հասանք։
Արի՛դ Երուանդ՝ ինձնէ բնաւ մի՛ հեռանար,
Թէ վըտանգ գայ, դո՛ւ դէմ կանգնիր քաջաբար։

ՍԼՈՒԿ

Կը զարմանամ՝ ամեն կողմերս անդորր են,
Միջադեսաց մէջ խրտմունք լսուած չեն.
Կովկաս, Եդեր սուս նըստել են սասանած,
Պոնտոս և Կողբք մընացած կան շըւարած։

ԱՐԳԱՄ

Ցաւիտեա՛ն կեաց՝ մեր վեհափառ թագաւոր,
Արքայութիւն քո է հաստատ և հըզօր.
Ո՞վ է կարող արդ մեր վերայ արշաւել,
Մեզ հըռոմն է իւր հովանեաւ ա՞պահովել.
Ո՛վ ընդդէմ քո համարձակի մերկել սուր,
Լեգէոնքըն պիտի տեսնէ հանդէպ իւր.

Միշտ չէ՞ն մեր մօտ Հռոմայ հրեղօր դեսպաններն,
Ի՞նչ են կարող առնել շնչին իշխաններն։

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Ինձ հաճոյ չէ այդ խրախուսի եղանակ,
Որ կ՚նորոգէ անցելոց դառն յիշատակ։
Իմ Մանդուխտիս և Քարձամի բանակռիւ,
Սկիզբն արաւ դոգցես խարդախ այդ բանիւ։
Զկամէր Դշխոյն՝ որ այլք լինին յոյս Աղդի,
Քարձամ պնդեց՝ թէ կայ և նպաստ Անահտի։

ՍԼՈՒԿ

Դիցամայրը՝ քաջ պարդեց իւր կարճ պատասխան,
Թէ իւրոց ի՞նչ բաշիս տալ է բաւական։
Այն գլուխ որ էր՝ իւր զօրութեան ճատագով,
Արժան վարկաւ հոսել իւր իսկ անդրիքով։
(Ադնեւեան ձիծաղեցան։)

ԵՐՈՒԱՆԴ

Երդնում յարեւդ արքայական՝ Սա՛նատրուկ,
Որ մըտերիմ ծառայ քո եմ և սարուկ։
Թէ յանդգնի ոք ընդդէմ քո ճիկ հանել,
Իսկոյն պատրաստ եմ մենամարտ ելանել։
Քեզ քաջ յայտ է՝ որ չունիմ ոք ախոյեան։
Մինչ կենդան եմ՝ քո է չքնաղ Հայաստան,
Եւ քո տեսիլ՝ արտադրութիւն է դինւոյ,
Երեւի դեռ չե՛ս կշտացել ի քքնոյ։

ՍԼՈՒԿ

Գուցէ Արքայդ մըտածութեամբ է նիրհել,
Որ իւր Դստրիկն յաջողել է յերազել։
Ես եւս մէկ օր մեռած դուստրս երբ տեսայ,
Նոյն ամսի մէջ կրկին դառայ նոր փեսայ։

Երրորդ հարսնս չէի տեսած մինչ այն օր։
Նոյն իսկ գիշեր հանդիպեցայ ես անոր։

ԱՐԳԱՄ

Ես 'ւ իմ հոգին՝ ճշմարիտ է ասածդն,
Արքայն պիտի կատարէ իւր տեսածդն։
Դշխոյի պէս մէկ օրիորդ գտանենք,
Մեր Վեհ Արքայն Նորափեսայ տեսանենք։

ՍԼՈՒԿ

Պառաւել է արդէն բամբիշն Նոնոփար,
Վեհ Արքայիդ փեսայութեան է յօժար։
Նա արդէն իւր տաշտաքերանքն ընծայեց։
Իւր առագաստ նոր հարսնացուին ընձեռեց։

ԵՐՈՒԱՆԴ

Այլ քաջդ արանց՝ տակաւին չես ծերացած,
Քեզ կեանք բաղում յուսամք տեսնել յաւելցած։
Մէկ Օրիորդ կը ճանաչեմ՝ կայ Մծբին,
Որոյ նմանն կարծեմ չըկայ ոք բնաւին։
Դուստր է մեծի Նահապետին Գնունեաց,
Եւ ինքն արդէն ութուտասան է ամաց։

ՍԼՈՒԿ

Քա՛ջ է խորհուրդդ։ երբ կատարուի մեր որսըն,
Ինքնին կ՚երթամ տեսուր առ Հարսըն։
Արքայն պարգեւ Հարսնախօսի չի խնայէր
Թէ չաւելնան կալուածներըս, չեն պակսէր։

ՍԱՆԱՏՐՈՒԿ ԱՐՔԱՑ (ծպտեալ։)

Սլուկ՝ պատրաստ է քեզ պարգեւ արժանի,
Դու Հայրիշխան պիտի լինիս արքունի։

Ակնարկեցէ՛ք՝ թող փողերը հնչեցնեն,
Երէկները կապարանէն արձակեն։

(Փողերն հնչեցին, երեւ ակոան վազվազել. ակոաս որն.)

ԱՐՔԱՅ

Ծանրացած եմ, և չեմ կարող հեծանել։

(Գահաւորակի վերայ կը բազմի անդորր.)

Զկարէ լուսին ծառոց ստուերքն հալածել։

ԵՐՈՒԱՆԴ

Ահա՛ որսորդ բերեց մէկ հատ վայրի հաւ։

ԱՐԳԱՄ

Այլ որսորդ գայ՝ ծանրաբեռնեալ եղջերուաւ։

(Յանկարծ նեղ մի եկաւ սեւերեցաւ Սանատրուկի սրտին,
և նա գլորվեցաւ գահաւորակի վերայ։)

ԵՐՈՒԱՆԴ (Բարձրայայն աղաղակելով.)

Այս՝ ինչ փորձանք... ո՞վ արձակեց նետ վրրէպ։

ՍԼՈՒԿ (Գլխին զարնելով և կոկոզելով.)

Արդ նոր հասաւ աղքին ցաւոց երաշխէպ։

(Բազմուելեան ժերցեցաւ.)

ԱՐԳԱՄ (Լալով գոռալով.)

Կատարուեցաւ վեհ Արքայի տեսիլքն։

(Բազմուելեան խառնիխուռն կը վազվազեն.)

ՍԼՈՒԿ (Կոկոնելով.)

Զո՛ւր անցան մեր խրախուսանք խօսիլքն։

ԵՐՈՒԱՆԴ (Նեղը ժուլեց, հառեց.)

Նշան կենաց չէ՛ մնացել Արքայի։

(Բազմուելեան շրջապատեց.)

ԱՐԳԱՄ

Շուտ հոգ տանինք ժառանգութեան իւր գահի։

ՍԼՈՒԿ (Ա՛ սմբոնն.)

Արքայորդւոց մէջէն ո՞րըն կը կամիք։

ԱՐԳԱՄ

Արքայորդւոց մէջէն չը կա՛ն արժանիք։

ՍԼՈՒԿ

Իշխանաց մէջ ո՞վ կայ գահին ժառանգորդ։

ԱՐԳԱՄ (Հանելաւ ոտքն.)

Կեցցէ՛ Երուանդ՝ վեհ Արքային նոր յաջորդ։

ԲԱԶՈՒՄՔ (Բազմուելեան դէջեն.)

Կեցցէ՛ Երուանդ մեր նորընտիր թագաւոր։

ԱՐԳԱՄ (Դարձոցեալ ոտքն է պատեան.)

Կեցցէ՛ Երուանդ՝ քաջն արանց՝ փառաւոր։

ՍԼՈՒԿ (Սանատրուկի ինքն դրեց Երուանդի գլուխն.)

Կեցցէ՛ Երուանդ՝ նորապսակ մեր Արքայ։

ՈՄԱՆՔ (Բազմուելեան դէջեն.)

Կեցցէ՛ Երուանդ նոր կանգնել Տուն Հայկակայ։

ԴԵՍՊԱՆ ՀՌՈՄԱՑ (Ա՛ Երուանդ.)

Ինձ Սանատրուկ խոստացել էր կալուածներ։

ԵՐՈՒԱՆԴ

Ինձ այժմ օգնէ՛, քեզ կան անհուն պարգեւներ։

ԴԵՍՊԱՆ

Կեցցէ՛ Երուանդ՝ Հռոմայ գահին բարեկամ.
Նորա պաշտպան է կայսր հզօր բարեխնամ։

23 MAR 2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0568804